# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՌՑԱՆՑ ԴԱՍԸՆԹԱՑ «ԴԵՈՆԹՈԼՈԳԻԱ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ» ԹԵՄԱՅՈՎ

08.04.2020 16:35

Տեղեկացնում ենք, որ 09.04.2020թ.  ժամը 14.00-16.0--ն ՀՀ փաստաբանների պալատը կազմակերպելու է հեռավար դասընթաց «Դեոնթոլոգիա և մասնագիտական կարգավիճակ» թեմայով, որին փաստաբանները կարող են միանալ իրենց գտնվելու վայրից:

Դասընթացը կվարի ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը:

Դասընթացին կարող են մասնակցել նախապես՝ մինչև 09.04.2020թ.  ժամը 11.00- գրանցված փաստաբանները:

Գրանցվելու համար անհրաժեշտ է info@advocates.am հասցեին էլեկտրոնային նամակ ուղարկել՝ նշելով փաստաբանի անունը, ազգանունը և արտոնագրի համարը:

Դասընթացին գրանցված փաստաբանների էլեկտրոնային փոստին կուղարկվի հրավեր համապատասխան հղումով, որն ակտիվացնելով փաստաբանը կմիանա դասընթացի հարթակին:

Դասընթացի մասնակցությունը յուրաքանչյուր փաստաբանի համար կհաշվարկվի դեոնթոլոգիա դասընթացի վերապատրաստման 4 (չորս) ակադեմիական ժամ:

Տեխնիկական խնդիրների դեպքում կարող եք զանգահարել 010 600 701 հեռախոսահամարով:

Հարգանքով՝

ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })